



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

09.01.2023թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մեկնարկել է հերթական ձմեռային գորակոչը:

Սիրելի՛ նորակոչիկներ, արդեն ձեր հերթն է միանալու հայրենիքի ու պետական սահմանների պաշտպանության սուրբ գործին:

Դժվար ժամանակներ ենք ապրում, և այս պահին բոլորիս մոտ մեկ կարևոր գիտակցում պետք է լինի՝ հայրենիքը ՄԵՐՆ Է, հայրենիքը ՄԵՎՆ Է՝ ու յուրաքանչյուրս մեր տեղում պետք է անձնվիրաբար, նվիրումով, պատվով ծառայենք նրան:

Տղերք,

անկեղծորեն մաղթում եմ, որ ծառայությանը վերաբերվեք որպես սուրբ գործի. եղեք զգոն, երբեք չկորցնեք աչալքջությունը, սիրեք և գնահատեք ձեր հրամանատարներին, լսեք նրանց խորհուրդները, ծառայակից ընկերներին վերաբերեք որպես եղբայրների՝ միմյանց թե ու թիկունք լինելով ծառայեք ու ողջ և առողջ վերադարձեք ձեր օջախներ:

Մաղթում եմ, որպեսզի խաղաղ պայմաններում անցնի ձեր ծառայությունը:

Շնորհավորում եմ նաև բոլոր նորակոչիկների ծնողներին, հարազատներին, ընկերներին ու մաղթում հպարտության զգացումին միախառնված համբերություն:

Անփորձանք ծառայություն և խաղաղություն մեր երկրին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ